ՍՏԱԽԱՆՈՎՅԱԿԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՆԵՍՈՎ

Տրակտորակիր, խմբի պետ

# ՓՈՐԵԼ ԱՐԱԳ ՅԵՎ ԱՌԱՆՑ ԾՌՄԱՆ

Թողարկում 1

ՊԳՑՀ—ԾՍԺԿ—Ադր. ՊԳՑՀ

Բաքու—1938—Մոսկվա

Ադր. Պ. Գ. Տ. Հ. ԲԱՆՎՈՐ
ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱԳՎԻ ԿԱԲԻՆԵՏ

622
Լ-22

ԲԱՆՎՈՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱԳՎԻ ԿԱԲԻՆԵՏ

## Ադր. Պ. Մ. Գ. Տ. Հ.

*(Բաքու կոմունիստիչեսկայա փողոց, Կովկասի նավթագործների միության շենք 2-րդ հարկ սենյակ 21)*

*Կաբինետը տալիս է բանավոր և գրավոր կոնսուլտացիա՝ բանվոր հեղինակներին գրքերի պլանը կազմելու հարցերին վերաբերյալ, նյութերի ընտրության և սիստեմատիզացման, տպագրության պատրաստելու և հատուկ հարցերի մասին, գրքեր գրելու կապակցությամբ։*

*Կաբինետը կոնսուլտացիա յե տալիս նաև բրոշյուրներ կազմելու «Ստախանովականի գրադարանի» համար։*

*Կաբինետն անց է կացնում բոլոր շրջանների կուլտուրայի պալատներում կանոնավոր կոնսուլտացիա՝ բանվոր—նավթագործների համար և ամեն կերպ աջակցում է բրոշյուրներ կազմելուն։*

*Կոնսուլտացիան տեղի ունի ամեն մի շրջանի համար առանձին նշանակված օրերում յերեկոյան ժամը 7-ից մինչև 9-ը։*

Կաբինետը բաց է ամեն օր, բացի ընդհանուր հանգստյան օրերից։

622
4-22



ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆԻ-ԳՐԱԴԱՐԱՆ

Ադր. Պ. Մ. Գ. Տ. Հ. ԲԱՆՎՈՐ
ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱԳՎԻ ԿԱԲԻՆԵՏ

*ԱՐՍԵՆ ՎԱՆԵՍՈՎ*
*Ցքանշանակիր, հորի պետ*

# ՓՈՐԵԼ ԱՐԱԳ ՅԵՎ ԱՌԱՆՑ ԾՌՄԱՆ

ԹՈՂԱՐԿՈՒՄ 1

...ТЕКА ТССР
ИН 324 1

ՊԳՏՀ — ԾԱԺԿ — ԱԴՐՊԳՏՀ
ԲԱԳՈՒ—1938—ՄՈՍԿՎԱ

07 AUG 2013
13.034

№ 4756
Ա. Ն.—3 (2)—1

Խմբագիր՝ Հ. Ա. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ ՑՆ. ՈՍԻՊՈՎ
Թարգմանեց ինժ. Զ. ԳԵՂԱՄՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
43068.63

Сдано в набор 26/VII 1938 г.
Подписано к печати 28/X 1938 г.
7/8 печ. л. 35.960 тип. зн.

Главлит № 7547. Заказ № 2073. Тираж 500.
Тип. „Кр. Восток", Баку, ул. Юного пионера, 84.

07 AUG 2013

## ԳԵՐԱԶԱՆՑ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

*Սկսած 1931 թվականից մինչև 1938 թվականի մայիս ամիսը յես աշխատել եմ վորպես հորափոր վարպետ, վորից հետո ինձ նշանակել են հորի պետ։ Իմ աշխատանքի այդ ժամանակաշրջանում յես փորել ու շահագործման եմ հանձնել ավելի քան 60 նավթահոր։*

*Իմ փորած հորերից վոչ մեկում չեն յեղել վոչ լուրջ ավարիա, վոչ ժայթքումներ։ Հորի ծռությունն ել միշտ աննշան է յեղել։*

*Վերջին մեկ և կես տարվա ընթացքում Ստալիննեվթ տրեստի սիստեմում իմ բրիգադան խորագույն, խոր և վոչ խոր հորերում հորափորման արագության մի շարք ռեկորդներ է սահմանել։*

*1937 թվականին ինձ հանձնարարված եր փորել 6000 մետր։ Չնայած մի շարք խո-*

չնդոտների (յերեք ամիս պարապուրդ ենք ունեցել, բանվորական տեղի անպատրաստ լինելու պատճառով) փաստապես յես փորել եմ 8000 մետր։

Ամբողջ բրիգադով հորափորման տեխնիկան յուրացնելու շնորհիվ, բրիգադի ճիշտ հրահանգումն, աշխատանքի ճիշտ կանոնավոր կազմակերպումը, բրիգադի մշտական կազմն—ահա այդ բոլորն ինձ հնարավորություն են տվել հորափորման առաջավոր հազարակների շարքերն անցնելու։

Տասնհինգերրորդ հորիզոնի վրա № 742 հորը յես ավարտել եմ 12 որ ժամկետից առաջ, ստանոկ—ամսում տալով 9605 մետր արագություն։ № 907 հորը 5-րդ հորիզոնի վրա ավարտել եմ 2400 մետր ստանոկ—ամսվա արագությամբ։ 17-րդ հորիզոնի վրա № 2521 հորը վերջացրել եմ 26 որ առաջ, 1218 ստանոկ—ամսվա արագությամբ։ Յենթաքերմակային № 2541 խորագույն հորն ավարտել եմ ժամկետից 36 որ առաջ, 790 մետր ստանոկ—ամսվա արագությամբ։

Բացի նշված հորերից, 1937 թվականի



ընթացքում յես ժամկետից առաջ ու բարձր արագությամբ ավարտել ու շահագործման եմ հանձնել № 493 հորը (17-րդ հորիզոնի վրա) 35 որ ժամկետից առաջ և № 1284 հորը 19 որ ժամկետից առաջ։

Իմ փորած հորերը բոլորն յեղել են բարձր վորակի ու մեր սոցիալիստական յերկրին առատ նավթ են տալիս։

Այսպիսով ստալինյան շրջանում հորափորման բարձր արագության մի շարք ռեկորդներ սահմանելով, (այդ ռեկորդները դեռ պահում եմ) յես հենց այդպիսով հերքել եմ «սահմանական» վնասակար թեորիան, վորին դեռևս կողմնակից է հորափորման աշխատողների վորոշ մասը։ Այդ «թեորիան» ժխտում է մեր պայմաններում խոշոր արագություններ նվաճելու հնարավորությունները, անհնարին է համարում առանց ավարիայի ու ծռման փորելը։

Յես ներկա յեմ յեղել այս տարվա փետրվարին հրավիրված նավթագործների համամիութենական խորհրդակցությանն ուր ղեկավարման ստալինյան վոճի վարպետ

Ծանր Արդյունաբերության ժողկոմ ընկեր Կագանովիչը նշանակալից ճառ ասեց, որը մոբիլիզացիայի յենթարկեց նավթագործների ամբողջ բանակը, նավթի ֆրոնտում շեշտակի բեկում ստեղծելու և մեր սոցիալիստական հայրենիքն անհրաժեշտ քանակությամբ վառելիքով ապահովելու համար։

Ստալինյան ժողկոմի ցուցումներն աշխատանքի նոր լիցք տվին ինձ, նավթի համար մղվող հետագա պայքարում։

Ընկեր Կագանովիչի հրամանին կոնկրետ պատասխանելու և հորափորման ցիկլը կրճատելու համար, յես պարտավորություն վերցրի № 1314 նոր հորում ավելի բարձր ցուցանիշներ տալ և 40 օր ժամկետից առաջ շահագործման հանձնել այն։

Յես ստալինյան ժողկոմի առաջ պարտավորվել եմ 1938 թվականի առաջադրությունը նույնպես գերակատարել և գերազանցել արագ հորափորման իմ նախկին ռեկորդները։

Դրա գրավականը իմ բանվորական կոլեկտիվն ե, որն աչքի յե ընկնում իր



տոկունությամբ և խանդավառությամբ, որը համառորեն պայքարում ե հորափորման տեխնիկայի յուրացման, հորափորման ավելի մեծ արագությունների համար։

## ՊԱՐԶՈՐՈՇ ՀՐԱՀԱՆԳՈՒՄԸ—ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՐԱՇԽԻՔՆ Ե

Հենց, որ նոր հորի կետը և նրա յերկրաբանական կտրվածքներն ստանում եմ, հավաքում եմ իմ հորափոր բրիգադան և մանրամասն քննարկում եմ հորի կառուցվածքը (կոնստրուկցիա) ու նախագիծը։ Տեխնիկական հրահանգման ժամանակ իմ բրիգադի անդամների ուշադրությունը բևեռում եմ առանձնապես փորիչ խողովակների ճիշտ օգտագործման, ցեխահան նասոսի աշխատանքի, կավալուծույթի նորմալ բաղադրության ու նրա որակի և դոլոտայի աշխատանքի վրա։

Ձեռքի տակ ունենալով հորի յերկրաբանական կտրվածքը, յես հորափորներին ճիշտ ցուցումներ եմ տալիս, որ խորության

վրա ինչպիսի դուրերով է պետք փորել («ձկան պոչ» կամ «Ռիգի»)։ Սովորաբար կարծր շերտերում մենք գործ ենք ածում «Ռիգի» դոլոտան։ Մեծ արագություններ նվաճելու համար մղած պայքարում խոշոր դեր են խաղացել այդ դոլոտաները, վորոնք յես սիստեմատիկ գործ եմ ածել կարծր շերտեր փորելիս։

Գրաֆիկը կայուն օրենք է իմ բրիգադի համար։ Գրաֆիկով աշխատելը մեզ հնարավորություն է տալիս ավելացնել զուտ փորման վրա սպառվող արտադրական ժամանակն։ Ամեն մի հերթ հերթափոխության գալով ստանում է վորոշակի առաջադրանք։

Բացի հորափորման ընդհանուր գրաֆիկից յես կազմում եմ նաև փորման օրական և հերթային գրաֆիկներ։ Գրաֆիկ կազմելիս յես հաշվի յեմ առնում փորվելիք շերտի առանձնահատկությունները։

Բացի դրանից յես իմ բրիգադայում անհատական հրահանգման կարգ եմ մտցրել։ Բրիգադի ամեն անդամին առանձին հրահանգում եմ իր առաջադրության մասին։



Նրանցից յուրաքանչյուրին սովորեցրել եմ նաև կավալուծույթին հսկելու աշխատանքը։

Նրանք անսխալ և արագ կարող են վորոշել լուծույթի վորակը։ Անհատական հրահանգման միջոցով հաջողվում է հայտաբերել յուրաքանչյուր բանվորի ընդունակությունները։ Յես անհրաժեշտ եմ համարում պահանջկոտ լինել բրիգադի ամեն մի բանվորի նկատմամբ, վարչության տեխնիկական կարգադրությունները կատարելու առթիվ։

Խիստ միանձնավարությունը վերացնում է դիմազրկությունը և անպատասխանատվությունը։ Պահանջելով, վոր իմ կարգադրությունները ճշտությամբ կատարվեն, ինքս էլ կատարում եմ ինձ հանձնարարած առաջադրանքն անհապաղ և ճշտորեն։

Հաստատակամությունը, պահանջկոտությունը, կարգապահությունը և զգոնությունը—հորափոր վարպետի՝ իբրև արտադրության հրամանատարի, անհրաժեշտ հատկություններն են։ Բայց հրամանատարությունը հարկավոր է հմտությամբ ա-

նել, լոկ վարչարարությամբ հաջողություն ձեռք բերել չի կարելի։

Վարչականությունը պետք է զուգորդել լավ հրահանգման և գործի էությունը բացատրելու հետ։ Ես այդպես էլ անում եմ։

Ես ցանկանում եմ այստեղ շեշտել նաև այն հանգամանքը, որ շատ բան կախված է հենց վարպետից։ Ամենից առաջ հարկավոր է, որ ինքը վարպետը նախաձեռնություն հայտաբերի։

Վարպետը պետք է կարողանա լավ կազմակերպել բանվորական ժամանակը։ Մեր բրիգադում այնպես չի լինում, որ մեկն աշխատի, իսկ մյուսն առանց գործի ձեռքերը ծալած նստի։

Կազմակերպելով բրիգադի աշխատանքը, յես չեմ սահմանափակվում միայն անմիջապես արտադրական տեղամասով։ Բացի հորում, մարդկանց հետ աշխատելուց, յես հաճախ լինում եմ նրանց բնակավայրերում։

Լինելով հորափորների, արդելակողների, շտանգովշչիկների և բանվորների մոտ, յես ուսումնասիրում եմ նրանց տրամադրու-



թյունները, հետաքրքրվում եմ ոչ միայն նրանց այլ և նրանց ընտանիքի կարիքներով։ Գաղտնիք չէ, որ յեթե տանն ամեն ինչ լավ է և հանգիստ, աշխատանքն էլ հաջող է ընդհանում։

Այդ հանգամանքն ստիպում է ինձ ուշադրությամբ հետևել իմ բանվորներին։ Գնալով բանվորի բնակարանը, յես զրուցում եմ նրա կնոջ, յերեխաների հետ, իմանում եմ թե՛ ինչի կարիք են զգում, և յեթե իմ ուժերից վեր է բավարարել նրանց կարիքները, ապա դիմում եմ հորափորման գրասենյակի ղեկավարներին։ Զգալով այդ հոգատարությունն իրենց մասին, մարդիկ ավելի լավ ու հանգիստ են աշխատում։

## ԱՎԱՐԻԱ ՅԵՐԲԵՔ ՉԵՆՔ ԱՆՈՒՄ

Իմ աշխատանքի ժամանակաշրջանում ինչպես վերևում շեշտեցի, փորել եմ ավելի քան 60 հոր նրանցից ոչ մեկում լուրջ ավարիա չի յեղել, որովհետև յես միշտ էլ ձգտել եմ ճիշտ դասավորել ուժերը, պարզորոշ բաշխել նրանց պարտականություն-

ներն, ստախանովականորեն կազմակերպել աշխատանքը։ Ինձ մոտ ամեն մի բանվոր գիտե յուր տեղը և յուր պարտականությունները։

Հորափորը հորափորման ժամանակ կանգնած լինելով արգելակի մոտ, պատասխանատու յե փորման գործիքների և ամբողջ սարքավորման համար։ Նա զբաղված ե միայն հորը փորելով։ Արգելակողը հետևում ե միայն ցեխահան նասոսի նորմալ աշխատանքին, կավալուծույթի վորակին և մանր գործիքների պահպանմանը։

Վերխովոյը պատասխանատու յե մեխանիզմները յուղելու համար, իսկ բանվորը հորի մաքրությանն ու միաժամանակ օգնում ե մյուսներին։ Հերթը ինչպես կանոն հանձնվում ե լրնթաց աշխատանքի ժամանակ։ Աշխատանքի այդպիսի պարզորոշ կազմակերպումը բարձրացնում ե յուրաքանչյուր բանվորի պատասխանատվությունը և զգոնությունը։ Իմ հորափոր բրիգադայում, դեռ չի յեղել այնպիսի դեպք, վոր խողովակի մուֆտայի կամ այլ սարքավոր-



ման կտորվածքը վորևե մեկի կողմից աննկատելի մնա։

Ավարիան ինքն իրեն չի առաջանում։ Մարդիկ են ավարիա անում։ Դրա համար ել ինչպես իմ աշխատանքի փորձն ե ցույց տալիս, ամեն ինչ կախված ե մարդկանց կազմակերպելուց, նրանց տեխնիկական մակարդակի բարձրացումից, ու աշխատանքի հմտությունից, փորելու ընթացքում տեխնիկական սարքավորումները ճիշտ օգտագործելուց։

Ինչպես տեսնում եք վերջին հաշվով ամեն ինչ կախված ե մարդկանցից։ Յես անձամբ սիստեմատիկորեն ստուգում եմ մեխանիզմի բոլոր մասերը, չեմ թողնում, վոր ծանրաբեռնեն ստանոկը և գործիքները, միջոցների յեմ դիմում, վոր աշխատանքը սահուն ընթանա առանց հապճեպության ու իրարանցման։

## ՏԻՐԱՊԵՏԵԼ ԵՆՔ ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Փորվող հորերում սովորաբար գործ ենք ածում հետևյալ սարքավորումները․—

Ծմիգալի անվան գործարանի լեբյոդկա, փակ տիպի ռոտոր, յերկմոտորանոց—բեգունկոր, «Կրասնի Մոլոտ» գործարանի ցեխային նասոս: Վերստուգիչ—չափող գործիքներից, գործ ենք ածում դրիլլոմետր, ամպերմետր, մանոմետր և կավալուծույթի վորակը վորոշող գործիքներ (վիսկոզիմետր, Լիսենկոյի ոտստոյնիկ) և այլն:

Հորափորները սովորել են լիովին օգտագործել սարքավորման կարողությունը: Կարգավորելով ռոտորի պտույտների քանակը, մենք փորելն սկսելիս այդ թիվը հասցնում ենք մի րոպեյում մինչև 130-ի, իսկ հետագայում խորացման հետ միասին աստղիկները (զվեզդոչկի) փոխարինելու միջոցով ռոտորի պտույտների թիվը մի րոպեյում իջեցնում ենք մինչև 80-ի:

Հորափորման տեխնիկայի յուրացման շնորհիվ հորափորները վերստուգիչ—չափող գործիքների միջոցով կարողանում են ռոտորի արագ շրջապտույտը համաձայնեցնել դոլոտայի վրա գործադրելիք կանոնավոր ճնշման հետ: Դրանով կանխվում է



հորի ծռումը: Դոլոտայի վրա միջին ճնշում գործադրելով մենք վոչ միայն խուսափում ենք հորը ծռելուց այլ և կանխում ենք գործիքի կտրվելը:

Իմ բրիգադան սովորել է ինքնուրույն կատարել սարքավորման ընթացիկ նորոգումը (սալնիկի սեղմումը, ստանոկի ամրացումը, կափարիչների փոխումը և այլն) դրանով իսկ խուսափելով աշխատանքի ընդհատումներից և պարապուրդներից:

Սարքավորումը լավ խնամելով ապահովվում է յերկարատև աշխատելու նրա ունակությունը:

Ռոտորը մենք սիստեմատիկաբար յուղում ենք մեքենայի յուղով, իսկ հորափորման խողովակների փականքները—գրաֆիտի յուղով—դրանով իսկ չենք թողնում, վոր ժամանակից առաջ նրանք մաշվեն, հեշտացնում ու արագացնում ենք խողովակներն իրարից հանելու գործը:

Այսպիսով ստանոկը, ռոտորը, ցեխահան նասոսը և մյուս սարքավորումները մեզ մոտ յերբեք ժամանակից շուտ շարքից չեն դուրս

գալիս: Աշխատանքներն արագացնելու համար մենք դժվարին ու շատ աշխատանք պահանջող օպերացիաները հաճախ կատարում ենք կոլեկտիվ ուժերով: Օրինակ Տալային բլոկի, կանատի վերտլյուգի, ռոտորի և մյուս սարքավորումների փոխումը սովորաբար կատարում ենք մինչև հերթապահությունը վերջանալը այնպես, որ այդ աշխատանքին մասնակցում են յերկու հերթեր: Այդպիսով նշված սարքավորումները փոխելու աշխատանքի ճիշտ ժամանակը մենք կրճատում ենք 60—50 տոկոսով: Նույնպիսի միջոցներ ենք ձեռք առնում և ժելոնները նստվածքներից ու ցեխից մաքրելու ժամանակ, յեթե դա կատարվում է փորելու ժամանակ: Բացի սարքավորումների կարողության լրիվ օգտագործման ու նրանց լավ խնամելուն, յես մեծ ուշադրություն եմ դարձնում հորափորման մեջ նոր տեխնիկական հարմարություններ կիրառելու գործին:

Այդ հարմարությունների գործադրման հետևանքով արագանում է փորման պրո-



4 3068-13

ցեսը և կրճատվում են օժանդակ գործողությունները:

Օրինակ № 2521 հորում մեծ հաջողությամբ գործադրեցի ռոտորի անհատական պրիվոդը, վորը մեծ նշանակություն ունի: Դա հնարավորություն է տալիս հեշտությամբ կարգավորել ռոտորի պտույտը և դրանով իսկ դոլոտայի աշխատանքի համար ավելի լավ ռեժիմ է ստեղծվում: Գալլի շղթաներն այդ դեպքում բացակայում են, ստանոկը քիչ է մաշվում, աշխատանքն ընթանում է սահուն, առանց աղմկի և այլն:

Շատ հորերում մենք գործ ենք ածել նաև Գրիցայ—Օլոլյանովի կարգավորիչը, վորը խոշոր դեր է խաղում դոլոտան համաչափորեն հորը մտցնելու գործում:

Ամեն տեսակի տեխնիկական նորություններ, վորոնց մասին յես տեղեկանում եմ մամուլից կամ հորափորման աշխատողների տեխնիկական խորհրդակցություններից, լավ ուս[illegible] յես ձգ-նում եմ ի[illegible] հո[illegible]

ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ ССР

# ՓՈՐԵԼ ԱՌԱՆՑ ԾՌՄԱՆ — ԴԱ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐ Է

Հորափորման մեջ հիմնական ու վճռական ցուցանիշներից մեկը հորի ուղիղ լինելն է։ Ուղիղ հորն, ինչպես հայտնի յե պարզ կողմնորոշում է տալիս շահագործվող հորիզոնի մասին, պակասեցնում է խողովակների չփումը, հետևաբար և հորում կանխում է ավարիաներն ու գործիքների կտրվելը։ Հորի ուղիղ լինելն ապահովում է նրա կանոնավոր ցեմենտացումն, արագացնում է փորման ցիկլը, և այդպիսով ապահովում է նավթատու շերտի հետագա ռացիոնալ շահագործումը։ Դրա համար էլ յես լուրջ ուշադրություն եմ դարձնում, որ հորը փորվի ուղիղ։

Ինձ հաճախ հարցնում են, թե ուղիղ հորը փորելու գործում, որն է իմ հաջողության գաղտնիքը։

Կաշխատեմ հակիրճ պատմել այդ մասին։

Հորերի ծռումն հորափորման հենց սկզբից կանխելու համար յես առանձին ուշադրություն եմ դարձնում, շախտային ուղղության վրա, այնպես որ նա խիստ ուղղահայաց լինի։ Ապա ստուգում եմ բուրգի կենտրոնացված լինելը, ռոտորային սեղանի հորիզոնական դիրքը։

Վորպեսզի բանող խողովակի վերին մասը շատ չշեղվի և գործիքն ավելորդ բեռան ճնշման տակ չճոճի ու չծռի հորը, յես սկզբում աշխատում եմ թեթև, չորս ռոլիկանոց բլոկով և թեթև վերտլյուգով և իսկույն դնում եմ բանող քառակուսի խողովակից պատրաստած յերկար ուդլինիտելը։

Շախտային ուղղությունից, հետո մինչև հազար մետր փորելը յուրաքանչյուր 50 մետր անցնելուց հետո, չափում ենք սովորաբար այդ ընդմիջումներում ծռությունը ստուգում ենք ինժ. Պետրոսյանի ապարատով։ (Պլավնիկյան թթվատով) իսկ հազար մետրից ավելի խորության վրա ծռումը չափում ենք ինկլինոմետրի օգնությամբ, յուրաքանչյուր 200 մետր փորելուց հետո։

Ուղիղ հորեր փորելու գործում անցնելիք շերտերի մասին պարզ պատկերացում ունե-

նալը կարևոր նշանակություն ունի։ Ինչպես յես նկատել եմ աշխատանքի ժամանակ ծռումը մեծ մասամբ առաջանում է մի շերտից մյուսին անցնելու ժամանակ, մանավորապես կարծր շերտից փափուկ շերտին անցնելու ժամանակ։ Վորպեսզի այդ պահին չծռենք հորը, նման դեպքերում մենք թուլացնում ենք դոլոտոյի վրա գործադրվող ճնշումը և փորում ենք մեծ զգուշությամբ։

## ԿԱՎԱԼՈՒԾՈՒՅԹԻ ՎՈՐԱԿԸ—ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում կավալուծույթի վրա։

Իմ պրակտիկայում յես հաճախ նկատել եմ, վոր Իլիչի անվան բուխտայում 5-րդ, 7-րդ և 11-րդ հորիզոնները փորելիս, կավալուծույթը հաճախ հորում չքանում է։ Այդ հանգամանքը հաճախ հիշատակվում է նաև տեխնիկական կորվածքներում։

Կավալուծույթի շրջանառության անհետացումից խուսափելու համար յես նախօ-



րոք պատվիրում եմ բարձր վորակի կավալուծույթ, անհրաժեշտ մածուցիկություն (վյազկոստ) ստեղծելու նպատակով, ավելացնելով նրան հեղուկ ապակի, վորը և կանխում է կավալուծույթի անհետացումը։

Անդրքիրմակու շերտում փորելիս լինում է յեռման ու ժայթքումների վտանգ, դրա համար նախօրոք համապատասխան տեսակարար կշռի և մածուցիկությամբ կավալուծույթ է պատվիրվում։

Կավալուծույթին խոշոր նշանակություն տալով, հորափորները միշտ հետևվում են նրա դրությանն ու վորակին։

Շնորհիվ կավալուծույթի վորակի վրա դարձրած ուշադրության, մենք հնարավորություն ենք ստեղծել գազով հագեցած հորիզոնները փորել առանց բարիտի։ Գործիքը հորի հատակում բռնվելուց խուսափելու և հնարավոր ավարիաներն արագ վերացնելու համար, մենք կավալուծույթին նավթ ենք ավելացնում։

## ԱՐԱԳԱՑՐԵԼ ԵՆՔ ԳՈՐԾԻՔԸ ՀՈՐԻ ՄԵՋ ԻՋԵՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ

Բարձր արագություններ նվաճելու գործում խոշոր նշանակություն ունի գործիքը հորի մեջ իջեցնելու և բարձրացնելու գործողության արագացման գործը։

Այդ նպատակով յես կիրառում եմ մի շարք տեխնիկական միջոցառումներ։

Նախ և առաջ յերկու էլեվատորների փոխարեն յես գործադրում եմ միայն մեկը։ Յերկրորդ էլեվատորի փոխարեն, կիրառել ենք Գինիմաշի սիստեմի «սեպեր»։ Բացի դրանից, յես կախովի բանալիները մոտեցրել եմ ռոտորին, վորպեսզի բանվորն առանց տեղից շարժվելու, կարողանա արագորեն բանալին հագցնել։ Օգտվելով Զալկինի ավտոմատ կոճով մենք հորափոր խողովակները շուռ ենք տալիս կանեփային թոկի կամ Զալկինի բանալու օգնությամբ։

Այդ միջոցառումը հեշտացնում է բանվորի աշխատանքն ու արագացնում փորող խողովակների իջեցման գործը։ Գործիքը հորի



հատակից բարձրացնելու օպերացիան արագացնելու համար մենք օգտագործում ենք էլեկտրոմոտորի լրիվ կարողությունը, համապատասխան փոփոխելով լեբյոդկայի արագությունը։

Նախ քան խողովակները հորից բարձրացնելը, ստուգում ենք բոլոր մեխանիզմները, «Գալլի» շղթաները և այլն, վորպեսզի գործիքը բարձրացման ժամանակ արգելք չլինի։ Աշխատանքի արագացմանը մեծ չափով նպաստում է հորափոր բրիգադայում սահմանված խիստ կարգապահությունը։ Մանր գործիքները պահվում են վորոշ տեղերում։ Պահանջված րոպեյին հարկավոր գործիքը կարելի յե իսկույն գտնել։

Բացի վերոհիշյալից գործիքը հորը իջեցնելու և բարձրացնելու օպերացիաներն արագացնելու գործում զգալի դեր են խաղացել և Գրոզնիի պոլատների կիրառումը։ Իրագործելով այս բոլոր միջոցառումները, իմ բրիգադը գործիքն իջեցնելու և բարձրացնելու օպերացիաների նորմաները միջին հաշվով կատարում է 120 տոկոսով։

Այդ գործում աշխատանքի փայլուն ցուցանիշներ են տալիս հորափորներ Մաթևոսյանը, Հասանովը և Քարամյանը։

## ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆ Է

Հորատման մեջ աշխատանքի վորակի հիմնական ցուցանիշներից մեկը—դա արտադրողական ժամանակի բարձր տեսակարար կշիռն է հանդիսանում, տվյալ հորի վրա սպառած ժամանակի ընդհանուր հաշվեկշռի մեջ։ Այդ տեսակետից իմ բրիգադան զգալի նվաճումներ է ձեռք բերել վորի մասին վկայում է մեր վերջին յերկու փորած հորերի վրա սպառած ժամանակի հաշվեկշռի աղյուսակը։

Մեր նվաճումներն առանձնապես ակնհայտ կդառնան, յեթե այս աղյուսակի թվերը համեմատենք Ստալիննեվթի շահագործական փորման տվյալների հետ։

Յեթե վերցնենք Ստալիննեվթի հորափորման գրասենյակի 1938 թվականի առաջին յեռամսյակի տվյալները, կտեսնենք, վոր



**Ժամանակի ոգտագործման հաշվեկշիռ**

| Ժամանակի սպառումը | Փորման աշխատանք. Մեխանիկական հորափորում | Փորման աշխատանք. Գործիքի բարձրացում և իջեցում | Փորման աշխատանք. Ընդամենը | Հորի ամրացում | Նախապատրաստական և ամփոփիչ աշխատանքներ | Ընդամենը արտադրողական ժամանակ | Ավարիաների վերացում | Կազմակերպչական պարապուրդներ | Այլ անարտադրողական ծախսեր | Ընդամենը անարտադրողական ժամանակ | Ընդամենը ծախսված ժամանակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **№ 2541 հորի ցուցանիշները։** | | | | | | | | | | | |
| Ժամերով . . . | 1012 | 331 | 1343 | 257 | 180 | 1780 | 45 | 24 | 35 | 104 | 1884 |
| Տոկոսներով . . | 53,7 | 17,6 | 71,3 | 13,7 | 9,5 | 94,5 | 2,4 | 1,2 | 1,9 | 5,5 | 100 |
| **№ 2521 հորի ցուցանիշները։** | | | | | | | | | | | |
| Ժամերով . . . | 433 | 129 | 562 | 208 | 64 | 834 | 12 | — | 10 | 22 | 856 |
| Տոկոսներով . . | 50,6 | 15,1 | 65,7 | 24,3 | 7,6 | 97,4 | 1,4 | — | 1,2 | 2,6 | 100 |

մեխանիկական հորափորումը կազմում է միջին թվով 39,8 տոկոս, մեր թվերի 57,7—50,6 տոկոսի դիմաց: Մեր անարտադրական ժամանակը (այսինքն նորոգման աշխատանքները և պարապուրդները) կազմում են 5,5 և 2,6 տոկոսը, իսկ Ստալիննեվթում միջին թվով 28,6 տոկոսը: Մեր արտադրական ժամանակը հասնում է 94,5-ի և 37,4 տոկոսի, մինչդեռ Ստալիննեվթում այդ կազմում է ընդամենը 71,4 տոկոս:

## ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Ստախանովյան աշխատանքն ստախանովյան աշխատավարձ է բերել իմ բրիգադայի անդամներին:

1937 թվականին, յես վորպես հորափոր վարպետ ստացել եմ 26000 ռուբլի, այսինքն ամսական միջին հաշվով 2.200 ռուբլի: Հորափոր Քարամյան Սարգիսն ստացել է 14.500 ռուբլի, կամ ամսական միջին հաշվով 1210 ռուբլի: Վերխովոյ Գերմյակովը՝ 7125 ռուբլի, ամսական միջին հաշվով 595



ռուբլի: Արգելակող Ախմեդով Ռ-ն՝ 7828 ռուբլի, կամ միջին հաշվով 652 ռուբլի, արգելակող Պետրոսյանը՝ 8300 ռուբլի ամսական միջին հաշվով 700 ռուբլի, բանվոր Ավանեսյան Հ-ն՝— 6750 ռուբլի, ամսական միջին հաշվով 560 ռուբլի:

Յես գտնում եմ, վոր մեր հորափորման ներկա դրությամբ ու հորի տեխնիկական ներկա վերազինմամբ, իմ ռեկորդները կարելի յե հեշտությամբ գերազանցել ու դարձնել ընդհանուրի սեփականությունը: Հիմնականում ամեն ինչ կախված է մարդկանց կանոնավոր կազմակերպելուց, նրանց դասավորումից, ղեկավարությունից, կարգապահությունից և վերջապես սեփական տեխնիկական մակարդակը բարձրացնելուց: Դրան վորպես փայլուն ապացույց կարող է ծառայել իմ հորափոր բրիգադայի որինակը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Գերազանց արագությունների և հորատման բարձր վորակի համար . . . . . . . . . 3

Պարզորոշ հրահանգումը—հաջողության յերաշխիքն է . . . . . . . . . . . . . . . . . 7

Ավարիա յերբեք չենք անում . . . . . . . . 11

Տիրապետել ենք հորատման տեխնիկային . . 13

Փորելն առանց ծռման—դա կարեվորագույն խնդիր է . . . . . . . . . . . . . . . . . 18

Կավալուծույթի վորակը—ուշադրության կենտրոնում . . . . . . . . . . . . . . . . . 20

Արագացրել ենք գործիքը հորի մեջ իջեցնելու ու բարձրացնելու աշխատանքները . . . . 22

Արտադրողականության գործակիցը մեր հիմնական նվաճումն է . . . . . . . . . . . . . 24

Ստախանովյան աշխատանքին — ստախանովյան աշխատավարձ . . . . . . . 26



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна



ՀՀ Ազգային գրադարան
NL0270882

13034

978

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

ԱՆ—3 (2)—1

БИБЛИОТЕЧКА-СТАХАНОВЦА

Арсен Ванесов

# БУРИТЬ БЫСТРО И БЕЗ КРИВИЗНЫ

◆

АзГОНТИ
Баку—1938—Москва